ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ ս. Էջմիածնի Գինօգի անունով, որով ուղարկելով Կովկասի Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականի օգոստոսի 25-ի, № 22582 գրութեան պատճէնը, առաջադրուեց կարգադրել, շրջաբերական հրամաններով, բոլոր թեմական առաջնորդներին իրենց թեմի հայոց եկեղեցիներում ներկայ պատերազմում ընկած և վիրաւոր զինուորների օգտին գանձանակ շրջեցնել և ժողովուած դրամն ուղարկել Սինօդ՝ ըստ պատկանելոյն հասցնելու համար։ 29 օգոստոսի, թ. 1245։

Կոնդակ գերապատիւ Տ. Բագրատ եպիսկոպոսի անունով, որով, իւր հրաժարականի համաձայն, արձակուեց Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ճեմարանի տեսչի պաշտօնից և յանձնարարուեց Տ. Մատթէոս եպիսկոպոսի և Տ. Բարգէն վարդապետի ներկայութեամբ բոլոր գոյքն, գործերն ու հաշիւն յանձնել նոր կարգուած տեսուչ պ. Ս. Մալխասեանին։ Միևնոյն կոնդակով յանձնարարուեց Տ. Բագրատ եպիսկոպոսին իւր հսկողութեան տակ առնել և վերջնականապէս աւարտել կառուցուող մանկավարժական թանգարանը և բնական գիտութեանց շինութիւնը, որոնք աւարտելուց յետոյ կյանձնուեն ճեմարանի վարչութեան։ 29 օգոստոսի, թ. 1246։

Կոնդակ պ. Ս. Մալխասեանի անունով, որով հաստատուեց Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ճեմարանի տեսուչ և յանձնարարուեց ստանալ Տ. Բագրատ եպիսկոպոսից, Տ. Մատթէոս եպիսկոպոսի և Տ. Բարգէն վարդապետի ներկայութեամբ, առանձին յանձնողական և ստացողական ցուցակով, ճեմարանի կահ-կարասին, գործերը, մատեանները և հաշիւները և այդ ցուցակը, բոլոր ներկայ եղողների ստորագրութեամբ, ներկայացնել Նորին Սրբութեան։ 29 օգոստոսի, թ. 1247։

Նորին Սրբութեան գրութեամբ ծանուցուեց Կովկասի Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականին, որ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին կարգադրութիւն անել՝ բոլոր հայոց եկեղեցիներում գանձանակ շրջեցնել պատերազմում ընկած և վիրաւոր զինուորների օգտին։ 29 օգոստոսի. թ. 1249։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Շամախու հայոց վիճակային կոնսիստորիային ներկայացնել Նորին Սրբութեան Շամախու հայոց թեմական դպրանոցի մասին հին գործերից ժողոված տեղեկագիրը։ 3 սեպտեմբերի, թ. 1252։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ճեմարանի վարչութեան ներկայացրած 186 ռ. 75 կ., որպիսի գումարը նուիրել է դպրոցական ֆոնդին Հ. Ճեմարանի ուսուցչական խումբը։ 3 սեպտեմբ. թ. 1268։

Դիւանի գրութեամբ ծանուցուեց Վանայ առաջնորդական տեղապահ Մեսրոպ քահանայ Ճանիկեանին, որ Աղթամարայ Կաթուղիկոսական Տեղապահ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազեանն արտասահմանեան անցագիր ստանալուն պէս կուղևորուի իւր նոր պաշտօնատեղին՝ Աղթամար։ 4 սեպտեմբերի, թ. 1278։

Կոնդակ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի անունով, որ թոյլատրուեց թաղել, մահից յետոյ, Նոր-Նախիջևանցի պ. Գէորգ Ալախանեանի մարմինը՝ նոյն քաղաքի ս. Համբարձման եկեղեցու գաւթում, ի նկատի ունենալով Ալախանեանի հետևեալ խոշոր նուիրաբերութիւնները. 1000 ռուբ. Ս. Համբարձում եկեղեցու վերանորոգութեան, 500 ռուբ. ծխական դպրոցի շինութեան, 1500 ռուբ. գերեզմանատան պարսպի շինութեան. կտակել է 1000 ռուբ. վերոյիշեալ Ս. Համբարձում եկեղեցուն, իսկ այժմ ցանկանում է շինել ճաշարան և սերտարան չքաւոր և աղքատ աշակերտուհիների համար՝ իւր վաղաթառամ սիրասուն զաւակի յիշատակը յաւերժացնելու համար։ 5 սեպտեմ., թ. 1285։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին փոխադրել Տարօնի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանի անունով, համաձայն նորա օգոստոսի 4-ի, թ. 731 յայտարարութեան, Պոպովեան վարժարանի շինութեան դրամից այլ ևս երեք հազար (3000) ռուբլի։ 8 սեպտեմբ., թ. 1294։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Տարօնի հայոց առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանին փութով ներկայացնել Նորին Վեհափառութեան Պոպովեան վարժարանի շինութեան մուտքի և ելքի մանրամասն հաշիւը։ 8 սեպտեմբ., թ. 1300։

Դիւանի գրութիւն Պարսկա-Հնդկաստանի Հայոց Առաջնորդական Խորհրդարանի անունով, որով յայտնուեց, թէ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը ցանկանում է Գէորգ ծ. վարդապետ Թուրեանին կարգել Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդ, որի մասին Կ. Պոլսոյ հայոց ամենապատիւ Պատրիարքի հետ բանակցութիւն է վարուում։ 11 սեպտեմբերի, թ. 1313։

Նորին Սրբութեան մակագրութիւն պատերազմում ՀԱասուածներին օգնող Կովկասի Ցանձնաժողովի նախագահ Կոմսուհի Ելիսաւէտա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովի 9/10 սեպտեմբերի, թ. 168 գրութեան վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին հրամանագրել բոլոր թեմական առաջնորդներին՝ դանձանակ շրջեցնել հայոց եկեղեցիներում յօգուտ պատերազմում ՀԱասուածների և ժողոված դրամը Սինօդիդ միջոցով ուղարկել Ցանձնաժողովի նախագահ Պայծառափայլ Կոմսուհի Ելիսաւետա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովին»։ 15 սեպտեմբ., թ. 1335։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Նոր-Նախիջևանի փոխանորդ Տ. Գէորգ վարդապետ Զէօրեկչեանին կարգադրել փոխադրել տալ Նորին Սրբութեան անունով հանգուցեալ Սարգիս Խոճեանի ամբողջ կտակագումարը (արժէթղթերը և առձեռն դրամը)։ 15 սեպտեմբ., թ. 1336։

Նորին Սրբութեան մակագրութեամբ ուղարկուեց ս. Էջմիածնի Սինոդին Մայր Աթոռի միաբան Գարեգին վարդապետի Տաճկաստանցի պ. Կարապետ Էֆէնդի Գոբիկեանից ստացած՝ ա) Սինոպի, բ) Ամիսոսի, գ) Հռովմէական տեղական և դ) Լևոն Հայոց Թագաւորի չորս դրամները և պատուիրուեց յանձնել Մայր Աթոռի Թանգարան՝ անկորուստ պահելու համար։ 17 սեպտեմբ., թ. 1344։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Տ. Գարեգին վարդապետին վերոյիշեալ չորս դրամի ստացումը և Սինոդի միջոցով Թանգարան յանձնելը։ 17 սեպտեմբ., թ. 1347։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով յայտնելով, որ սեպտեմբերի 28-ին, կիւրակի օրը, եպիսկոպոս են ձեռնադրուելու Կեսարիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Խոսրով ծ. վարդապետ Պեհրիկեան և Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ Մայր Աթոռի միաբան Տ. Ներսէս ծ. վարդապետ Մելիք-Թանգեան, առաջադրուեց Մայր Աթոռի միաբաններից մէկի ձեռքով երդուեցնել տալ յիշեալ նուիրեալներին՝ ս. Իշման Սեղանի առաջ, ըստ սահմանեալ ուխտի և ծիսի Հայաստանեայց ս. եկեղեցու։ 21 սեպտեմբերի, թ. 1360։

Կոնդակ նոյն Սինոդի անունով, որով ուղարկելով Երևանի փոխ-թեմակալի յայտարարութիւնը և նորան կցած դպիր Արշակ Ծովիանեանի վկայականները՝ առաջադրուեց՝ ի նկատի ունենալով ընծայացուի Սևանի վանքում քսան տարուայ ծառայութիւնը և փոխ-թեմակալի միջնորդութիւնը, ընդունել կուսակրօն հոգևորականների շարքը և տեղեկութիւն տալ այդ մասին Նորին Վեհափառութեան։ 23 սեպտեմբերի, թ. 1373։

Դիւանի գրութիւն Ամերիկայի Հայոց թեմի Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունու անունով, որով առաջադրուեց փութով վերադարձնել Տաճկաստան իւր նախկին պաշտօնատեղին Մանիկեան քահանային, հակառակութեան դէպքում զեկուցանել Նորին Վեհափառութեան նոր կարգադրութեան համար։ 23 սեպտեմբերի, թ. 1377։